

ք.Եղեգնաձոր

12.06.2017թ.

ՋՈՂՎԱԾ ԿԱՄ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԴԱՐՁԱԾ ԶԻՆ. ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾԱՎԱԾ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁԱՆԱԺՈՂՈՎԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍ

Նիստի աշխատանքներին մասնակցում են՝ հանձնաժողովի անդամները և ՀՀ պաշտպանության նախարարի 20.03.2017թ. N 267 հրամանով ստեղծված հանձնաժողովի անդամներ Գ.Բաբայանը, Մ.հարությունյանը և Ա.Կիրակոսյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր 7 զոհված (մահացած) զինծառայողների անօթևան ընտանիքների և 3 առաջին խմբի հաշմանդամների բնակարանային գործերում առկա փաստաթղթերը համապատասխանությունը <<Ձինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին>> ՀՀ օրենքի 34 հոդվածի և ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի <<Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին>>N 947-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին: Ուսումնասիրեց թվով 10 գործեր՝

1.Գևորգյան Արթուր Վարազդատի, ք.Վայք, մահացել է 16.01.2013թ ծառայողական պարտականությունները կատարելիս,

2.Կարապետյան Տարոն Նահապետի, ք.Վայք, մահացել է 20.12.2015թ զինծառայության ընթացքում,

3.Կարապետյան Տարոն Նահապետի, ք.Վայք, մահացել է 20.12.2015թ զինծառայության ընթացքում /2գործ/,

4. Գրիգորյան Թաթուլ Պավլիկի, գ.Բարձրունի, զոհվել 14.08.1993թ. ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ,

5.Գևորգյան Անուշավան Աշոտի, գ.Խնձորուտ, մահացել է 22.11.2006թ. զինծառայության ընթացքում,

6.Եսայան Ռուբիկ Խորենի, գ.Վերնաշեն, զոհվել է 05.07.1993թ. Աղդամի շրջանում մարտական գործողությունների ժամանակ,

7.Աբրահամյան Ալիկ Նորայրի, գ.Խաչիկ, զոհվել է 26.07.2011թ. մարտական հերթապահության ժամանակ,

8.Պետրոսյան Սայադ Վոլոդյայի, գ.Աղավնաձոր, վիրավորվել է 22.03.1998թ. զինծառայության ժամանակ, 1-ին խմբի հաշմանդամ



9. Սեփլիյան Հայկ Բենիամինի, ք.Եղեգնաձոր, վիրավորվել է 2016թ. ապրիլին՝ ՀՀ սահմանները պաշտպանելիս, 1-ին խումբ,

10.Պողոսյան Մհեր Կարապետի, ք.Վայք, վիրավորվել է 08.04.1994թ. Հորադիզում, 1-ին խմբի հաշմանդամ:

Հանձնաժողովը որոշեց

1.Համայնքապետարանների օգնությամբ վերացնել առկա թերությունները և օրենքով սահմանված կարգով կարիքավոր ընտանիքների ճշգրտված գործերը ներկայացնել ՀՀ ՊՆ :

Հանձնաժողովի նախագահ
Քարտուղար

 Մ.հարությունյան
 Գ.Բաբայան